ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ



2016

ՏԱՐԵԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՔԱՆԱՔԵՌ-ՁԵՅԹՈՒՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ





Հարգելի՛ համաքաղաքացիներ,

2016 թվականն ամփոփում ենք նոր և համարձակ նախաձեռնություններով, ծավալուն նախագծերով և քաղաքային կառավարման ոլորտում որոշումների կայացման գործընթացին մեր համաքաղաքացիների ակտիվ մասնակցությամբ: Տարվա ընթացքում իրականացված բոլոր աշխատանքները հնարավոր եղավ կյանքի կոչել միայն համատեղ ջանքերի և փոխադարձ վստահության շնորհիվ: Ավանդական դարձած այս հաշվետվության միջոցով նպատակ ունենք մեկ անգամ ևս ընդգծելու, որ մենք հաշվետու ենք մեր համաքաղաքացիներին:

Նախորդ տարիներին իրականացված ծրագրերն այս տարի համալրեցինք նոր և լայնամասշտաբ նախաձեռնություններով. բարեկարգեցինք այգիներ, պուրակներ, փողոցներ ու բակային տարածքներ, կառուցեցինք նոր խաղահրապարակներ ու ժամանցի վայրեր: Շարունակեցինք կարգի բերել ու ավելացնել քաղաքային լուսավորությունը, ոռոգման ցանցերը, ընդլայնել ընդհանուր օգտագործման կանաչ տարածքները, և, իհարկե, կարողացանք վերանորոգել շենքեր, կրթության, մշակույթի ու մարզական օջախներ:

Տարվա ընթացքում կատարված բոլոր աշխատանքների հիմքում եղել է և շարունակում է մնալ մայրաքաղաքի համաչափ զարգացումը, արժանավայել քաղաքային միջավայրի ապահովումն ու մեր սերունդներին կանաչ Երևան ժառանգելու տեսլականը: Ուրախալի է, որ քաղաքում կատարվող դրական փոփոխությունները մեր համաքաղաքացիների համար ոչ միայն ակնառու, այլև «սովորական» դարձան: Այսօր արդեն մեզանից ոչ ոք այլևս չի պատկերացնում քաղաքային միջավայրն ու առօրյան առանց այդ փոփոխությունների և զարգացումների:

Մայրաքաղաք Երևանի սիրելի՛ բնակիչներ, համոզվա՛ծ եմ, որ հաջորդող տարիներին ևս նույն նվիրումով, սրտացավությամբ և հետևողականությամբ մենք միասին շարունակելու ենք կյանքի կոչել իրատեսական ծրագրեր՝ ապահովելով մայրաքաղաքի կայուն զարգացումը:

Երևանի քաղաքապետ՝
ՏԱՐՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ



Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի սիրելի՛ բնակիչներ,

տարեցտարի ականատեսն ենք դառնում Քանաքեռ-Զեյթունում կատարված աշխատանքների և բարեփոխումների, որոնք ուղղված են մեր վարչական շրջանն ավելի բարեկարգ ու հարմարավետ դարձնելուն: Հպարտությամբ պետք է նշեմ, որ 2016 թվականը ևս արդյունավետ ու բեղմնավոր տարի էր՝ լի բազմաթիվ ձեռքբերումներով: Այդ մասին է վկայում նաև ձեր ուշադրությանը ներկայացվող այս հաշվետվությունը: Կփաստեք, որ ձեր կողմից բարձրացված բոլոր հարցերն ու մտահոգությունները մշտապես եղել են մեր ուշադրության կենտրոնում, որոնցից շատերին տրվել են նաև որոշակի լուծումներ: Փոխադարձ վստահության և մեր համատեղ սրտացավ աշխատանքի շնորհիվ ավելի առարկայական ու շոշափելի են դարձել մեր հարազատ վարչական շրջանի ձեռքերումները: Եվ համոզված եմ, որ մենք միասին դեռ շատ հաջողություններ կգրանցենք ապագայում:

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավար՝
Արտակ Հանիսյան

Լուսավորություն, բարեկարգ փողոցներ և բակեր



2016թ. Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում իրականացվել են ընթացիկ վերանորոգման, փողոցների, մայթերի և բակերի ասֆալտապատման, սալիկապատման, թեքահարթակների կառուցման և լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքներ.

- փողոցների և բակերի ասֆալտապատում՝ **47 000մ²**,
- հենապատերի վերանորոգում՝ **78մ²**,
- թեքահարթակների կառուցում և վերանորոգում՝ **6 հատ:**

Վարչական շրջանում ևս **11** հասցե ապահովվել է **1 820 մ** երկարությամբ լուսավորության ցանցով:



Կանաչ տարածքների խնամք և բարեկարգում

- Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի այգիներում, պուրակներում և փողոցների հարակից տարածքներում կատարվել են բարեկարգման, խնամքի և պահպանման աշխատանքներ՝ **52 հա:**
- Վարչական շրջանի այգիներում, պուրակներում և փողոցների հարակից տարածքներում տնկվել է թվով **73 060** ծաղկասածիլ և **44 000** կակաչի սոխուկ:
- Իրականացվել են հուշարձանների և դրանց շրջակա տարածքների մաքրման և խնամքի աշխատանքներ:
- Էտվել, ձևավորվել և երիտասարդացվել է **847** ծառ, ինչպես նաև հատվել են չոր կամ անկման վտանգ ներկայացնող ծառեր:









- Վարչական շրջանի այգիներում, պուրակներում և փողոցների հարակից տարածքներում տնկվել է թվով **2 433 ծառ**:
- Ստեղծվել է **2 660 մ²** սիզամարգ:
- Վերանորոգվել է **228 գծմ** ոռոգման ջրագիծ:
- Կառուցվել է **1** ցայտաղբյուր Կ. Ուլնեցի 3փ. 2/1 հասցեում:













Շենքերի ընդհանուր բարեկարգում



- Վարչական շրջանի թվով 15 շենքերում նորոգվել է **238 գծմ** ջրթափ խողովակ,
- 84 շենքերում նորոգվել է **618 գծմ** երկարությամբ ջրամատակարարման և ջրահեռացման ցանց,
- 9 շենքերում ապակետպատվել են **255 մ²** ընդհանուր մակերեսով շքամուտքերի դռներ և պատուհաններ,
- 25 շենքերում վերանորոգվել է **59 մուտք**,
- վերանորոգվել է **2 834մ²** հարթ և **22 75մ²** թեք տանիք:



ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ



Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում կառուցվել, բարեկարգվել, նկարազարդվել է 30 բակային տարածք:







Վարչական շրջանի բակերում տեղադրվել է

- մանկական 5 խաղ, 18 մարզասարք, 3 զրուցարան, 19 նստարան,
- նկարազարդվել է 25 պատ,
- կառուցվել է մինի ֆուտբոլի 1 խաղադաշտ:















Այցելություն զորամասեր

- Իրականացվել է ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ գոտիներում ծառայող 53 ժամկետային զինծառայողների ծնողների այցելություն զորամասեր:

Համագործակցություն ՀԿ-ների հետ

- Համագործակցելով շրջանում գործող բարեգործական հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների հետ՝ 800 շահառուի համար իրականացվել են տարբեր սոցիալական ծրագրեր (սննդի, հագուստի, կոշիկի, հիգիենայի պարագաների տրամադրում):
- Դրամական օգնություն է ցուցաբերվել 220 ընտանիքի:
- Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների և ազատամարտիկների 165 ընտանիքների հատկացվել է դրամական աջակցություն:
- Հուղարկավորության ծախսերի նպատակով աջակցություն է ցուցաբերվել 23 ընտանիքի:
- Բարեգործական 3 ճաշարաններից օգտվել է 450 շահառու:
- Կազմակերպվել է 70 երեխայի ամառային հանգիստը Ծաղկաձորի «ԼԱՎԱ Աղբյուր» ճամբարում, 200 երեխայի համար՝ չորս բակային ճամբարներում:
- Պայուսակներ, գրենական պիտույքներ են տրամադրվել 300 երեխայի:
- Վարչական շրջանի 54 ընտանիքի հատկացվել է 88 մ^3 վառելափայտ:
- Բաղնիքի անվճար ծառայություններից օգտվել 850 շահառու:
- Ընտանիքի միջազգային օրվա առիթով 40 բազմազավակ ընտանիքի հատկացվել է սննդի փաթեթ:
- Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա առիթով հաշմանդամ երեխաներ ունեցող ընտանիքների 50 երեխայի հատկացվել է անկողնային սպիտակեղեն:
- «Արի տուն - 2016» ծրագրով վարչական շրջանում հյուրընկալվել է 13 սփյուռքահայ երեխա:
- «Էրեբունի-Երևան 2798» ծրագրի շրջանակում վարչական շրջանի 213 ընտանիքների հատկացվել է կենցաղային տեխնիկա:





- Հիմնանորոգման աշխատանքներ են իրականացվել վարչական շրջանի թիվ 162 մանկապարտեզում, թիվ 152 մանկապարտեզում՝ պուրակի ստեղծում և ձևավորում, թիվ 150 մանկապարտեզում տեղադրվել են բակային մանկական խաղեր:

- Իրականացվել են շրջայցեր մանկապարտեզներ՝ սննդի որակի և պիտանելության ստուգման նպատակով, մանկապարտեզներում կազմակերպվել են միջոցառումներ, բաց պարապմունքներ, ավարտական հանդեսներ:

- Վարչական շրջանում հիմնվել է շախմատի դպրոց:

- Կազմակերպվել են միջոցառումներ՝ Գիտելիքի և դպրության օրվա, Ուսուցչի տոնի, Վերջին զանգի առթիվ:

- Ուսուցչի օրվա առթիվ վարչական շրջանի ղեկավարը շնորհավորել է ուսուցիչներին և հանձնել պատվոգրեր:

- Եկեղեցու պատմության ուսուցիչների համար Քրիստոսի Պայծառակերպության(Վարդավառ) տոնի կապակցությամբ կազմակերպվել է էքսկուրսիա դեպի Տավուշի մարզ՝ Հաղարծին, որտեղ նրանց դիմավորել է Տավուշի մարզի թեմի առաջնորդ Սրբազան Բագրատը, եկեղեցու բակում տեղի է ունեցել մեծ տոնական միջոցառում:



- Քանաքեռում վերաբացվել է Սուրբ Աստվածածին եկեղեցին:
- Հիմնանորոգվել է Սարգիս Բարխուդարյանի անվան հ.2 արվեստի դպրոցը:
- Նշվել են ՀՀ տոնական և հիշատակի օրերը, պարբերաբար կազմակերպվել են խաղեր և մրցույթներ, հանդեսներ, ցուցահանդեսներ, տարաբնույթ թեմատիկ միջոցառումներ՝ Բուն Բարեկենդանի տոն, «Երևանյան ամառ» ծրագրի շրջանակում վարչական շրջանի Դ. Անհաղթի անվ. պուրակում՝ «Ողջույն Քանաքեռ-Զեյթունից» խորագրով ամառային գլխավոր միջոցառում, ինչպես նաև ամենշաբաթյա զվարճալի բակային ծրագրեր:
- Սուրբ Աստվածածնի Վերափոխման (Խաղողօրհնեքի) տոնի առթիվ վարչական շրջանի Սբ. Հակոբ և վերաբացված Սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցիներում՝ ծիսական արարողություն և բերքի օրհնություն:
- Սբ. Զատիկ տոնին ընդառաջ Սբ. Հակոբ եկեղեցու քահանաները հանդիպել են վարչական շրջանի դպրոցների ուսուցիչներին և աշակերտներին:
- Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնին Դ. Անհաղթի անվ. պուրակում կազմակերպվել է միջոցառում՝ վարչական շրջանի բոլոր դպրոցների մասնակցությամբ:
- Այցելություն և ուրախ միջոցառումներ են կազմակերպվել Մարի Իզմիրլյանի անվ. մասնագիտացված մանկատանը, ՀՕՖ և «Զատիկ» երեխաների աջակցման կենտրոններում, ինչպես նաև կազմակերպվել է էքսկուսիա Կենդանաբանական այգի:
- «Եվրոպական ժառանգության օրեր» խորագրի ներքո Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանում կազմակերպվել է 2-օրյա միջոցառում:
- Կազմակերպվել է Կոմիտասի ստեղծագործական կյանքին և գործունեությանը նվիրված գրական, երաժշտական երեկո:
- Կենտրոնացված գրադարանային համալիրում կազմակերպվել են մանկագիրների, սիրիահայ գրողների հետ հանդիպումներ, պոեզիայի երեկոներ ընթերցողների մասնակցությամբ, ինչպես նաև նշվել է գրադարանավարի օրը:
- «Զեյթուն» մշակութային կենտրոնում մշտապես գործում են իրար հաջորդող նկարչության, հուլունքագործության, կավագործության խմբակների սաների աշխատանքների ցուցահանդեսներ:
- Նշվել է ֆրանկոֆոնիայի միջազգային օրը:
- Հայաստանի Առաջին Հանրապետության օրվա առթիվ Քանաքեռի կապի գնդում կազմակերպվել է տոնական համերգ՝ «Զեյթուն» մշակութային կենտրոնի սաների մասնակցությամբ:





- «Երևանի Քանաքեռ-Զեյթունի մանկապատանեկան համալիր մարզադպրոցի» սաները մասնակցել են ՌԴ Վորոնեժ քաղաքում կայացած Վ. Լովցովի հիշատակին նվիրված հունահռոմեական ըմբշամարտի 15-րդ ավանդական մրցաշարին և զբաղեցրել են 1-3-րդ տեղերը: Գոռ Հովհաննիսյան՝ 1-ին տեղ, Ժորա Մարգարյան և Հոմերոս Առաքելյան՝ 2-րդ տեղ, Հայկ Իսպիրյան՝ 3-րդ տեղ:

- Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բնակիչ Նարեկ Իսկանդարյանը մասնակցել է Լեհաստանի Հանրապետության Կրակով քաղաքում տեղի ունեցած Ավանդական «Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի» մրցումներին, որտեղ քաղաքային փուլում վարչական շրջանի թիմը գրավել է 1-ին պատվավոր տեղը:

- Վարչական շրջանի հ.127 դպրոցի թիմը մասնակցել է հանրապետական հրաձգարանում կայացած ՀՀ Անկախության 25-րդ տարեդարձին նվիրված ՀՀ դպրոցականների «Դիպուկ հրաձիգ» հանրապետական մրցումներին և գրավել 2-րդ տեղը:

- Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթի 2016թ. մրցաշարի շաշկու առաջնությունում Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանը ներկայացնող Կարեն Մելքոնյանը գրավել է 2-րդ տեղը:

- Վարչական շրջանի թիմերը մասնակցել են ՀՀ նախագահի մրցանակի համար անցկացվող «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթին, ՀՀ Անկախության 25-րդ տարեդարձին նվիրված հանրակրթական դպրոցների 25-րդ մարզական խաղերի մրցումներին, ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկության մրցումներին, Կարատեի աշխարհի 33-րդ առաջնությանը և դարձել աշխարհի չեմպիոն, «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային փառատոնի մրցումներին:



ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

- Հաշվետու ժամանակահատվածում պետպատվերի շրջանակներում անվճար բուժօգնություն ստանալու նպատակով (տարբեր տեսակի վիրահատություններ և բուժում ստացիոնար պայմաններում) վարչական շրջանի առավել կարիքավոր քաղաքացիների տրվել է 18 միջնորդագիր:
- Հայկական ակնաբուժական նախագիծ բարեգործական հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում իրականացվել է 2 բնակչի վիրահատություն, 12 բնակչի տրամադրվել է օպտիկական ակնոց:
- Հայրենական մեծ պատերազմի և Արցախյան ազատամարտի 1-ին խմբի հաշմանդամների բուժման և դեղորայքի ձեռքբերման նպատակով յուրաքանչյուր եռամսյակ ցուցաբերվել է դրամական օգնություն:





- Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանը համագործակցության շրջանակներում տարբեր ոլորտների ծրագրեր է իրականացնում ԼՂՀ Շահումյանի Քարվաճառ շրջանի շրջվարչակազմի և ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքապետարանի հետ:

- Վարչական շրջանի ղեկավար Արտակ Հանիսյանն ընդունել է Եկատերինբուրգ քաղաքից ժամանած հյուրերին: Նրա գլխավորությամբ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը և Եկատերինբուրգի քաղաքային դումայի նախագահի տեղակալ Վիկտոր Նիկոլաևիչ Տեստովն ու Սվետլանա Եվգենևնա Գրիգորևան մասնակցեցին «Էրեբունի-Երևան 2798» տոնակատարությանը:

- Վարչական շրջանի ղեկավարի նախաձեռնությամբ և հրավերով «Էրեբունի-Երևան 2798» տոնակատարության միջոցառումներին մասնակցելու նպատակով Երևան էին ժամանել Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի 28 շնորհալի երեխաներ՝ ուսուցիչների ուղեկցությամբ, որոնք մշակույթի և արվեստի ոլորտում Հայաստանում և արտասահմանում ձեռքբերումների և հաջողությունների են հասել:

2016

ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Թեժ գիծ՝
+(374 11) 518-889
qanaqer_zeytun@yerevan.am



www.yerevan.am